

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի որոշում՝ 2019թ. մայիսի 10-ի N°5 նիստի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԴԱՍԱՑՈՒՑԱԿԻ ԿԱԶՄՄԱՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կանոնադրությամբ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
դասացուցակի կազմման ընթացակարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահ՝

Ա.Թ.Գրիգորյան

Հաստատում եմ՝ ՀՀ ԿԳՄՄՆ
«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Տնօրեն-----Է. Գ. Գասպարյան

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի
դասացուցակի կազմման

I.Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգը սահմանվում է ՀՀ ԿԳՄՄՆ « Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ի դասացուցակի կազմման և կիրառման համար:
2. Սույն աշխատակարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են մանկավարժական խորհրդի կողմից:

II.Դասացուցակի կազմման աշխատակարգը

1. Ոսումնական պարապմունքների դասացուցակը տվյալ ուսումնական հաստատության ուսումնական գործընթացի սխեմատիկ արտահայտությունն է:
2. Դասացուցակը կազմելիս առաջնորդվում են համակարգվածության սկզբունքով:
3. Դասացուցակը կազմելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր դասավանդողի աշխատաժամանակի տևողությունը. կախված ուսումնական հաստատության տիպից՝ սահմանվում է շաբաթական 22-33 ժամ (36 ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում):
4. Հաշվի է առնվում այն հանգամանքը,որ ուսումնական հաստատության վարչական աշխատողները (տնօրեն, տնօրենի տեղակալ,տնօրենի օգնական) կարող են դասավանդել շաբաթական մինչև 8 դասաժամ ներառյալ: Կես դրույքով պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող վարչական աշխատողը՝ շաբաթական 14 դասաժամ ուսումնական

ծանրաբեռնվածություն: Ըստ այդմ էլ դասացուցակում բաշխումը կատարվում է վերջին դասաժամերի հաշվին:

5. Դասացուցակը կազմելիս հաշվի է առնվում սովորողի մտավոր գործունեության ակտիվությունը օրվա տարբեր ժամերին (առավոտյան ժամը 9:00-ից մինչև 12:00 և 12:00-ից մինչև 15:00):
6. Շաբաթվա 1-ին, 2-րդ և 4-րդ օրերին դասացուցակում ընդգրկվում է 4 դաս (8 դասաժամ), իսկ 3-րդ և 5-րդ օրերին՝ 3 դաս (6 դասաժամ):
7. Բարդության որոշակի աստիճան ունեցող ուսումնական առարկաների (բնագիտամաթեմատիկական , բարձր կուրսերի համար՝ մասնագիտական) բաշխումը դասացուցակում կատարվում է առավոտյան ժամերին: Միջանկյալ ժամերին՝ հոգնածությունը թուլացնող ուսումնական առարկաներ (միջին մասնագիտական կրթական համակարգում):
8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգում, դասացուցակը կազմելիս , մասնագիտական մոդուլները դասավորվում են հաջորդականության կարգով՝ հաշվի առնելով գործնական պարապմունքների հերթագայության կարևորությունը:
9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգում ոչ մասնագիտական առարկաների բաշխումը կատարվում է համատեղելիության սկզբունքով՝ հաշվի առնելով տվյալ դասախոսի աշխատաժամանակի ծավալը միջին մասնագիտական կրթական համակարգում:
10. Ուսումնական հաստատության դասացուցակը , վերջնատեսքի բերված վիճակում, հաստատվում է տնօրենի կողմից (ստորագրությամբ և կնիքով):